

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԿԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/55 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
19	<p>Սեղանի թենիսի հավաքածու - Ցանցով (լրակազմ՝ թենիսի սեղան- 1 հատ, ցանց 1 հատ, սեղանի թենիսի ձեռնաթի 2 զույգ, սեղանի թենիսի գնդակ 50 հատ) - Սեղանը՝ անբողջությամբ մետաղական հիմքով, 8 ոտքերով, որոնց մեջտեղի 4 ոտքերի վրա արացրած են 2-ական անիվներ, որոնք ունեն արգելակման համակարգ: Սեղանի ծածկույթը՝ ՄԴՖ, 25մմ հաստությամբ: Սեղանի դաշտը եզրագծված է անվտանգության գոտիով, որի հաստությունը 25մմ է: Չափսը՝ երկարությունը՝ 2740մմ, լայնությունը՝ 1525մմ, բարձրությունը՝ 760մմ՝ որը համապատասխանում է մարզումային և մրցումային չափորոշիչներին: Սեղանը՝ բացվող և փակվող հարմարանքներով: Ցանց ամրակներով, կիսասինթետիկ հումքից պատրաստված, երկարությունը 1300-1400մմ, բարձրություն 152մմ: Ամրակները մետաղական է, տեղափոխվող չափսերի հնարավորությամբ: Մակարդակը մրցումային չափորոշիչներին համապատասխան: Սեղանի թենիսի ձեռնաթի - Փայտյա հիմքից և վրադիրներից հավաքված ձեռնաթիակ: Բռնակը գոգավոր կամ կոնաձև, պատրաստված է 10-12 փայտյա շերտերից, վրադիրը կարմիր և սև գույների հատուկ ծածկույթով, 2.1մմ: TIBHAR Tibor Harangozo GmbH արտադրողի Tibhar ֆիրմայի Master Yellow Edition Table Tennis Bat մոդելը կամ համարժեք համարվող՝ Tamasu CO արտադրողի Butterfly ֆիրմայի Timo Boll Platin մոդելը կամ համարժեք համարվող՝ TIBHAR Tibor Harangozo GmbH արտադրողի Tibhar ֆիրմայի Professional Allround Table Tennis Bat մոդելը: Մրցումային չափորոշիչներին համապատասխան: Սեղանի թենիսի գնդակ - Հումքը պլաստմասե կամ ցելյուլոիտ, քաշը 2.7 գրամ, 40 մմ տրամագծով, ստանդարտներին համապատասխան, գույնը նարնջագույն կամ սպիտակ: Նմուշը /նկար 20,21,22/ կցվում է: Պայմանագրի կատարման փուլում</p>

պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը $\pm 3\%$: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Մատակարարի կողմից: Եթե մատակարարումը իրականացվում է պահեստավորման վայր, ապա Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց, իսկ Վաճառողը պարտավորվում է տեղադրման ենթակա ապրանքների տեղադրումը վերջնական վայրում իրականացնել, երբ համապատասխան ապրանքները կտեղափոխվեն վերջնական վայր՝ Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

"ВИ ЭС ТИ СКАЙ" ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22400000000000000000-25/55 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
19	